

նայ հիւանդ անկեալ ի մահի՞ն, եւ երկիցս
երակ առեալ:»,

4. 2 Ապր. 1777 ի Հռոմ գրէ Հ. Գէորգ
առ Հ. Աստուածատուր ի Թր. "...Յայտասիկ
աւուրս, այսինքն է ի յՂ աւուրն Ապրիլի ելա-
նելոց է աստի Գերապայծառ Գր. Վ.ն որ երբեմն
Պատրիարգ էր ի Կ.Պօլիս, գնալ յԱնքօնայ, եւ
անդ կազմել իւր բնակութիւն եւ տուն, ըստ
բաղձանաց իւրոց, զոր եւ խնդրեաց ի Փռօփա-
կանտայէն, եւ հաճութեամբ նոցա այժմ գնայ
անդ, ունելով զնոյն ապրուստն զոր ունէր
աստ, այսինքն է զքսան սկութն, եւ սմա յանձ-
նեցի...»

5. 7 Սեպտ. 1777 "ի յանքօնայ" առ
Հ. Աստուածատուր ի Թր. "...ի վաղուց հետէ
ցանկայի եւ փափաքէի թղթակցիլ եւ հարցանել
զողջունէ սիրելութեանց ձերոց, բայց ոչ իշխէի,
զի որովհետեւ ոչ առիթ եւ ոչ նիւթ իմն գոյր
պատճառ, որ այնու գտանէաք պատճառ իմն.
բայց աստանօր ունեցաք պատճառ եւ շաղկապ
յերկուց կողմանց, այսինքն զշնորհալի եւ տիրա-
ցու Պետան զպարօն Յարութիւնն զձեր, եւ
զմեր վաղեմի սիրելին... ուրախ եմ մեծապէս
վասն յառաջադիմութեան եւ ի բարի միաբա-
նութեան ձերոյ, զոր Տէր առաջնորդեսցէ եւ
զմիջնորմն ատելութեան բարձցէ, եւ զսիրողն
խաղաղութեան բնակեցցի ի սիրտ եւ ի միջի
ձերում: ...նարգենիս այս է խնդիր մեր զի
մերս մեծապատիւ Յարութիւն Եպիսկոպոսի զոր-
պիսութենէն իւրն, եւ կամ իւրոց բանիցն, եթէ